Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-166-28.11.2012-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածում 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-րդ մաս.

«3.1. Սույն հոդվածի աղյուսակի «18.Գործունեության այլ բնագավառներ» բաժնի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 11-րդ կետերում նշված գործունեության տեսակների լիցենզիաներ ստացած անձանց արգելվում է որևէ ամսվա արդյունքերով իրացման շրջանառության 10 տոկոսից ավելին հսկիչ-դրամարկղային մեքենաներով արտացոլելը: Սույն մասում սահմանված սահմանաչափը գերազանցելու դեպքում սույն մասում նշված անձանց նկատմամբ կիրառվում են առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման համար օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցներ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հուլիսի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Վ. Այվազյան	«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հոդված 1-ով սահմանված այն դրույթը, համաձայն որի ալկոհոլային խմիչքների արտադրության լիցենզիա ստացող անձինք հնարավորություն կունենան զբաղվել միայն տվյալ գործունեության տեսակով, ընդունելի չէ, և առաջարկվում է հանել «այլ գործունեության տեսակներով զբաղվելու» սահմանափակումը: Միաժամանակ, առաջարկվում է կարգավորման հետևյալ մեխանիզմը. չսահմանափակել ալկոհոլային խմիչքների արտադրության լիցենզիա ունեցող անձանց այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը, սակայն սահմանել սեփական ցանցի միջոցով ՀԴՄ կտրոններով հիմնավորված արտադրանքի իրացման առավելագույն՝ 10 %-ի չափ:	Ընդունվել է:	Նախագիծը վերախմբագրվել է: